

**Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիային կից Միջտարածքային համագործակցության մասին թիվ 2 Արձանագրություն**

**Նախաբան**

Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիային կից թիվ 2 Արձանագրությունը ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

հաշվի առնելով 1995 թվականի նոյեմբերի 9-ին կնքված Շրջանակային կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունը, որը վերաբերում է անդրսահմանային համագործակցության շրջանակներում կատարված գործողությունների իրավական հետևանքներին և անդրսահմանային համագործակցության համաձայնագրերով ստեղծված մարմիններին,

հաշվի առնելով, որ տարածքային համայնքները կամ իշխանությունները իրենց գործառույթները արդյունավետ իրականացնելու համար զարգացնում են համագործակցությունը ոչ միայն հարևան պետությունների իշխանությունների հետ /անդրսահմանային համագործակցություն/, այլ նաև օտարերկրյա ոչ հարևան այլ իշխանությունների հետ, որոնք ունեն ընդհանուր շահեր /միջտարածքային համագործակցություն/, և դա իրականացնում են ոչ միայն անդրսահմանային համագործակցության մարմինների և տարածքային համայնքների կամ իշխանությունների միավորումների շրջանակում, այլ նաև երկկողմ մակարդակով,

նկատի ունենալով 1993 թվականի՝ անդամ պետությունների և Կառավարությունների ղեկավարների Վիեննայի հռչակագիրը, որը ճանաչել է Եվրոպայի խորհրդի դերը տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության միջոցով հանդուրժող և բարգավաճող Եվրոպա ստեղծելու գործում,

նշելով, որ միջտարածքային համագործակցության բնագավառում չկա այլ փաստաթուղթ, որը համեմատելի է Շրջանակային կոնվենցիայի հետ,

ցանկանալով, որ միջտարածքային համագործակցությունը իրականացվի միջազգային իրավական շրջանակներում,

համաձայնեցին հետևյալ դրույթների մասին.

**Հոդված 1**

Սույն Արձանագրության նպատակների համար «միջտարածքային համագործակցություն» հասկացությունը նշանակում է՝ երկու կամ ավելի

Պայմանավորվող կողմերի տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև հարաբերությունների հաստատմանն ուղղված որևէ համաձայնեցված գործողություն՝ այլ, քան հարևան իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության հարաբերություններն են, ներառյալ այլ պետությունների տարածքային համայնքների կամ իշխանությունների հետ համագործակցության համաձայնագրերի կնքումը:

## **Հոդված 2**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ճանաչի և հարգի Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 1-ին և 2-րդ հոդվածներում նշված և իր իրավագործության ներքո գտնվող տարածքային համայնքների կամ իշխանությունների իրավունքը՝ ընդգրկվելու քննարկումների մեջ և կազմելու միջտարածքային համագործակցության համաձայնագրեր՝ իրենց ընդհանուր իրավասության ոլորտներում, իրենց կանոնադրություններում սահմանված ընթացակարգերին և իրենց ազգային օրենսդրության համապատասխան և տվյալ Կողմի ստանձնած միջազգային պարտավորությունները հաշվի առնելով:

2. Միջտարածքային համագործակցության համաձայնագիրը պարտավորեցնում է միայն դրանք կնքած տարածքային համայնքներին կամ իշխանություններին:

## **Հոդված 3**

Սույն Արձանագրության Պայմանավորվող կողմերը կկիրառեն Շրջանակային կոնվենցիան, *mutatis mutandis*, միջտարածքային համագործակցության նկատմամբ:

## **Հոդված 4**

Սույն Արձանագրության Պայմանավորվող կողմերը, որոնք նաև Շրջանակային կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրության (այսուհետ՝ Լրացուցիչ արձանագրություն) Պայմանավորվող կողմեր են, *mutatis mutandis*, կկիրառեն վերը նշված Արձանագրությունը միջտարածքային համագործակցության նկատմամբ:

## **Հոդված 5**

Սույն Արձանագրության նպատակների համար «*mutatis mutandis*» նշանակում է, որ Շրջանակային կոնվենցիայում և Լրացուցիչ արձանագրության մեջ «անդրսահմանային համագործակցություն» տերմինը հասկացվում է որպես «միջտարածքային համագործակցություն», և որ Շրջանակային կոնվենցիայի և Լրացուցիչ

արձանագրության հոդվածները պետք է կիրառվեն, եթե սույն Արձանագրությունը այլ բան չի նախատեսում:

### **Հոդված 6**

1. Շրջանակային կոնվենցիայի և Լրացուցիչ արձանագրության յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սույն Արձանագրությունը ստորագրելիս կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը ավանդապահին ի պահ հանձնելիս հայտարարում է, որ ինքը կիրառելու է Լրացուցիչ արձանագրության 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները, սույն Արձանագրության 4-րդ հոդվածին համապատասխան, կամ այդ հոդվածներից միայն մեկը:

2. Այդպիսի հայտարարությունը կարող է հետագայում փոփոխվել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով:

### **Հոդված 7**

Սույն Արձանագրության դրույթների վերաբերյալ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

### **Հոդված 8**

1. Սույն Արձանագրությունը ստորագրման համար բաց է Շրջանակային կոնվենցիան ստորագրած պետությունների համար, որոնք կարող են արտահայտել իրենց համաձայնությունը հետևյալ ձևով.

ա/ ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանի, կամ

բ/ ստորագրությամբ՝ վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու պայմանով:

2. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող ստորագրել սույն Արձանագրությունը առանց վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանի, կամ ավանդապահին ի պահ հանձնել վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը, եթե նա ավանդապահին արդեն չի հանձնել կամ միաժամանակ չի հանձնում Շրջանակային կոնվենցիայի վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը:

3. Վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

### **Հոդված 9**

1. Արձանագրությունն ուժի մեջ կմտնի Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին Եվրոպայի խորհրդի անդամ չորս

պետությունների՝ 8-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ համաձայնությունը հայտնելուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

2. Այն անդամ պետությունների համար, որոնք հետագայում համաձայնություն կարտահայտեն Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին, այն ուժի մեջ կմտնի ստորագրման կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ հանձնելուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

### **Հոդված 10**

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո Շրջանակային կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետություն կարող է միանալ նաև Արձանագրությանը:

2. Ցանկացած միացած պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալուց սկսած՝ երեք ամիսը լրանալուց հետո:

### **Հոդված 11**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը՝ այդ մասին ծանուցելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալուց վեց ամիս հետո:

### **Հոդված 12**

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին և յուրաքանչյուր պետության, որը միացել է սույն Արձանագրությանը՝

ա/ 6-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերի կատարած յուրաքանչյուր հայտարարության մասին,

բ/ յուրաքանչյուր ստորագրման մասին,

գ/ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին յուրաքանչյուր փաստաթուղթն ի պահ տալու մասին,

դ/ 9-րդ ու 10-րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ժամկետի մասին,

ե/ սույն Արձանագրությանը վերաբերող յուրաքանչյուր այլ միջոցառման, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1998 թվականի մայիսի 5-ին, մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր

են, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության և յուրաքանչյուր այլ պետության, որը հրավիրվել է՝ միանալու սույն Արձանագրությանը:

**\*Համաձայն թիվ 2 Արձանագրության 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ նա, Արձանագրության 4-րդ հոդվածին համապատասխան, կկիրառի 4-րդ և 5-րդ հոդվածների դրույթները:**

**\*\*Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 1-ից:**